206.5
Z - 32

1002

206·5
Z-32

# ՀԱՇԻՒ

## ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

## 1910 Թ.

## ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

206.5
Z-32

*Նոր-Նախիջեւան*
*Տպարան Ս. Յ. Աւագեանի.*

Нахичевань на Дону
Типографія С. Я. Авакова.

370
2077-ՀԱ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍ.Ի. ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Նոր-Նախիջեւանի ս. Խաչ վանքի Վանական Կառավարութիւնը՝ բոլորելով իւր գործունէութեան երրորդ տարեշրջանը, կանոնադրութեան 11-րդ յօդուածի համաձայն՝ պատիւ ունի ներկայացնելու պատգամաւորներիդ Ընդհանուր Ժողովի քննութեանն ու հաստատութեանը 1910 թ. ել և մուտքի ու գործունէութեան հաշիւը. այլ և կանոնադրութեան 10-րդ յօդուածի համաձայն՝ առաջիկայ 1911 թուի ել և մուտքի մօտաւոր նախահաշիւը։

12001

# ՀԱՇԻՒ 1910 Թ.

## ՄՈՒՏՔ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I. | Մնացորդ առ 1-ն յունուարի 1910 թուի Ութ հազար չորս հարիւր տասն և եօթը ռուբլի երեք կոպ. (Ռափ. Պատկանեանի և Միք. Նալբանդեանի արձանների գումարի 23 ռ. 18 կոպէկ %-ով), որ կազմուած է հետևեալ գումարներից. | | | | |
| 1 | Պահեստի գումար | 2221 | 46 | | |
| 2 | Հիմնական նորոգութեան ֆոնդ | 2221 | 46 | | |
| 3 | Միքայէլ Նալբանդեանի և Ռ. Պատկանեանի արձանների նորոգութեան համար յատկացուած անձեռնմխելի գումարը 1909 թուի %-ով | 512 | 02 | | |
| 4 | Ծախսելի գումար | 3462 | 09 | 8417 | 03 |
| II. | Հաշուատուութեանս տարեշրջանում ս. Խաչ վանքը մուտք է ունեցել Տասն երկու հազար ութ հարիւր չորս ռուբլի յիսուն վեց կոպէկ՝ հետևեալ աղբիւրներից. | | | | |
| 1 | Վարելահողերի տարեկան վարձ | 6654 | 01 | | |
| 2 | Անվար թողած հողերից (բուրեանից) | 965 | — | | |
| 3 | Տնկարանից | 770 | — | | |
| 4 | Քարահանքից | 705 | — | | |
| 5 | Բանջարանոցից | 475 | — | | |
| 6 | Պարտէզի վարձ | 600 | — | | |
| 7 | Պարտէզի կապալառու պ. Մ. Քայեալեանից 'ի հաշիւ պարտքի | 425 | — | | |
| 8 | Ամարանոցների վարձ | 696 | — | | |
| 9 | Մոմից | 842 | 71 | | |
| 10 | Եկեղեցու և երգիչների գանձանակներից | 64 | 43 | | |
| 11 | Այլ և այլ նուէրներ (լուսագին զանազան առիթներով, և այլն) | 56 | 45 | | |
| 12 | Այլ և այլ նիւթերի վաճառումից (մատաղի մորթիների, անասունների, կաթնեղէնի, փայտեղէնի, գետնախնձորի, քար ու խճի և այլն) | 296 | 52 | | |
| 13 | Դրամատների %% 1909 թ. | 254 | 44 | 12804 | 56 |
| | Ընդամէնը | | | 21221 | 59 |

## ԵԼՔ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I. | Հաշուատուութեանս տարեշրջանում ս. Խաչ վանքը ելք է ունեցել Ութ հազար եօթն հարիւր իննսուն երեք ռուբլի եօթը կոպէկ. | | | | |
| 1 | Հ. վանահօր ռոճիկ | 600 | — | | |
| 2 | Տնտես-տիրացուի ռոճիկ | 445 | — | | |
| 3 | Երգիչներին տօների առթիւ | 96 | 50 | | |
| 4 | Պարտիզպանի ռոճիկ | 277 | — | | |
| 5 | Ծառաների ռոճիկներ և տօների առթիւ նուէրներ | 574 | 85 | | |
| 6 | Եկեղեցու և ամարանոցային շէնքերի նորոգութեան ծախք | 2832 | 4 | | |
| 7 | Մոմի և խնկի | 280 | 40 | | |
| 8 | Վառելիքի և լուսաւորութեան | 268 | 48 | | |
| 9 | Տարեկան սնունդ վանահօր, պաշտօնեաների, ծառաների և հիւրերի ծախք | 698 | 81 | | |
| 10 | Սեղանի և խոհանոցի սարքի | 48 | 46 | | |
| 11 | Անասունների կեր | 388 | 45 | | |
| 12 | Սառոյցի | 81 | 75 | | |
| 13 | Այլ և այլք (դեղեր, փոստ, հեռագիրներ, ժապաւինեալ մատեաններ, օճառ և այլն) | 184 | 50 | | |
| 14 | Կառքերի կարկատանի և ձիերի պայտելու | 84 | 35 | | |
| 15 | Կալուածական ծախքեր (ապահովագրութեան, հաշուի և յայտարարութիւնների տպագրութեան և այլն) | 224 | 10 | | |
| 16 | Ընդհանուր մշակութեան, ծաղկոցների և պարտէզի ծախք | 208 | 38 | | |
| 17 | Նոր-Նախիջևանի թեմ. հոգ. դպրանոցին նպաստ | 1500 | — | 8793 | 7 |
| 18 | Մնացորդ առ 1-ն յունուարի 1911 թուի (որի մէջ է նաև 1910 թ. պահեստի և հիմնական նորոգութեան ֆոնդի 2560 ռ. 90 կոպէկը) | | | 12428 | 52 |
| | Ընդամէնը | | | 21221 | 59 |

| | | |
|---|---|---|
| Փոխանցում . . | 21221 | 59 |
| | 21221 | 59 |

Նախագահ վանական կառավարութեան՝
Վանահայր Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանց.

Գործավար անդամ՝ Գէորգ սարկ. Չէօրէքչեանց.

1911 թուի մարտի 14-ին մենք՝ ներքոյ ստորագրեալ հաշուատեսներս՝ քննե
կան հաշիւը և գտանք, որ հաշուամատեանները վարած են ճիշտ և կանոնա
գումարները ունին իրենց ապացուցագրերը կամ ստորագրութիւն ժապա
երկու հազար չորս հարիւր քսան ութ ռուբլի յիսուն երկու կոպէկ (12428
գտնւում է ընթացիկ հաշւով վեց հազար ռուբլի (6000 ռ.), Ռոստովի փոխա
ռուբլի երկու կոպէկ (512 ռ.—2 կ.), Նախիջեանի փոխադարձ վարկի երկրորդ
ձեռն պատրաստի դրամ երեք հարիւր տասն և վեց ռուբլի յիսուն կոպ.,

Հաշուատեսներ



| | | |
|---|---|---|
| Փոխանցում . . | 21221 | 59 |
| | 21221 | 59 |

Անդամք Վ. Կ. | Յովհաննէս Ճապոշնիկեան
Արգար Դերիջանեան
Յովակիմ Սագիրեան

ցինք Վանական Կառավարութեան հաշուամատեանները և 1910 թուի տարե-
ւոր, բոլոր մուտքերը եղած են համաձայն պայմանաթղթերի, ծախսուած
ւինեալ մատեանի մէջ: Առ 1-ն յունուարի 1911 թուի մնացորդն է տասն-
ռ.—52 կ.), որից՝ Ռոստով-Նախիջեանի փոխադարձ վարկի ընկերութեան մօտ
դարձ վարկի երկրորդ ընկ. մօտ ընթացիկ հաշւով հինգ հարիւր տասներկու
ընկ. մօտ ընթացիկ հաշւով հինգ հազար վեց հարիւր ռուբլի (5600 ռ.), առ-
որ գտնւում է հ. վանահօր ձեռքը վանքի առօրեայ ծախքերի համար:

Յովակիմ Խամբուրեանց

Մանուկ Աշխաիերեան.

# ՆԱԽԱՀԱՇԻՒ 1911 Թ.

## ՄՈՒՏՔ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I. | *1911 թուի ընթացքում ս. Խաչ վանքը մուտք պիտի ունենայ մօտաւորապէս տասներկու հազար եօթ հարիւր երեսուն երեք ռուբլի իննսուն չորս կոպէկ հետեւեալ աղբիւրներից:* | | | | |
| 1 | *1910 թ. աճուրդով տուած 240 դ. 2271 ք. ս. վարելահողի երկրորդ կիսամեակի վարձ (մինչև 1911 թ. Սեպտեմբերի 1-ը)* , , , | 3251 | 44 | | |
| 2 | *1911 թ. վարձու տրուելիք 275 դ. վարելահողի առաջին կիսամեակի վարձ (սեպտեմբերի 1-ից մինչև տարեվերջը)* , , , , . | 3712 | 50 | | |
| 3 | *150 դ. արօտատեղերի վարձ (բուրեան) (միջին թիւ երկու կիսամեակի)* , , . | 1050 | — | | |
| 4 | *22 դ. տնկարանի վարձ կապալառու Ռամից* , | 770 | — | | |
| 5 | *10 դ. հողի համար Ստեփան Ակսեօնովից* , | 150 | — | | |
| 6 | *Բանջարանոցի տարեկան վարձ* , , , | 475 | — | | |
| 7 | *Քարահանքի տարեկան վարձ* , , , , | 705 | — | | |
| 8 | *Պարտէզի տարեկան վարձ* , , , , | 600 | — | | |
| 9 | *Պարտէզի կապալառու պ. Մ. Քայեալեանից՝ի հաշիւ հին պարտքի* , , , , , | 400 | — | | |
| 10 | *Ամարանոցների վարձ* , , , ; , | 600 | — | | |
| 11 | *Մոմից* , , , , , , | 600 | — | | |
| 12 | *Այլ և այլք* , , , , . | 120 | — | | |
| 13 | *Դրամագլխի %%-ներ* , , , , , | 300 | — | 12733 | 94 |
| | | | | 12733 | 94 |

## ԵԼՔ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I. | 1911 *թ ընթացքում ս. Խաչ վանքը ելք պիտի ունենայ մօտաւորապէս տասներկու հազար երեք հարիւր քսան ռուբլի վաթսուն կոպէկ:* | | | | |
| 1 | *Եկեղեցու ներքին և արտաքին վերանորոգութեան ծախք* , , , , , , | 1500 | — | | |
| 2 | *Շէնքերի ապահովագրութեան* , , , | 100 | — | | |
| 3 | *Մոմի և խնկի* , , , , , , | 264 | — | | |
| 4 | *Վանահօր ռոճիկ* , , , , , , | 600 | — | | |
| 5 | *Տնտես-տիրացուի ռոճիկ:* , , , , | 455 | — | | |
| 6 | *Պարտիզպանի ռոճիկ* , , , . , | 360 | — | | |
| 7 | *Ծառաների ռոճիկ և նուէրներ* , , , | 710 | — | | |
| 8 | *Երգիչների նուէրներ* , . , , , | 100 | — | | |
| 9 | *Պարտէզի, ծաղկանոցների և բակի մշակութեան ծախք* , , , , , , | 500 | — | | |
| 10 | *Վառելիքի և լուսաւորութեան* , , ; | 280 | — | | |
| 11 | *Տարեկան մնունդ վանքի բոլոր ծառայողների և հիւրերի ծախք* , , , , , | 700 | — | | |
| 12 | *Անասունների կեր* , . , , , | 575 | — | | |
| 13 | *Երկու նոր կառքի (նստելու և բեռ կրելու)* , | 700 | — | | |
| 14 | *Երեք սառցատների համար սառոյց կրելու վարձ* | 85 | — | | |
| 15 | *Կարասիք և սեղանի ու խոհանոցի սարք* , , | 100 | — | | |
| 16 | *Նոր-Նախիջեւանի թեմ. դպրանոցին նպաստ* , | 1500 | — | | |
| 17 | *Աղբիւրի նորոգութեան ծախք* , , , | 500 | — | | |
| 18 | *Այլ և այլք* , , , , , , , | 130 | — | | |
| 19 | *Պահեստի գումար (ընդհանուր եկամտի 10%-ը)* | 1280 | 80 | | |
| 20 | *Հիմնական նորոգութեան ֆոնդ (ընդհանուր եկամտի 10%-ը)* , , , , , | 1280 | 80 | | |
| 21 | *Հեռախօսի գիծը վանք բերելու ծախք* , , | 600 | — | 12320 | 60 |
| | | | | 12320 | 60 |

*Նախագահ վանական կառավարութեան՝*
*Վանահայր Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանց.*

*Գործավար անդամ՝ Գէորգ սարկ. Ջէօրէճեանց.*

*Անդամներ Վ. Կ.* | *Յովհաննէս Ճապոշնիկեան*
*Աբգար Դերիչանեան*
*Յովակիմ Սագիրեան*

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

Վանական Կառավարութիւնը՝ ներկայացնելով Ծխական-պատգամաւորական Ընդհանուր Ժողովին 1910 թուի հաշիւը և 1911 թուի նախահաշիւը, կարևոր է համարում յաւելցնել նաև սոյն համառօտ տեղեկագիրը՝ իբրև պարզաբանութիւն հաշուի և նախահաշուի մի քանի յօդուածների։

**Վ. Կ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 910 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ։** Վանական Կառավարութեան էական պարտքն է եղել՝ կառավարել վանքի կայքն ու գոյքը և հոգ տանել նորա բարեկարգութեան ու կալուածների արդիւնաւորութեան վրայ։ Այս նպատակով Վ. Կ. 1910 թուի ընթացքում ունեցել է 28 նիստ, ուր՝ բացի ընթացիկ գործերի կարգաւորութիւնից և ել և մուտից մատեանի ամսական հաշուաքննութիւնից, խորհրդածութեան առարկայ են դարձել վանքի կալուածների շահագործութեան վերաբերեալ հարցեր և արծարծուել են վանքի ընդհանուր բարենորոգման և եկամտի նոր աղբիւրներ ստեղծելու խնդիրներ։

Վանական Կառավարութեան գործունէութիւնը պարզելու համար թուենք մի առ մի վանքի եկամտի բոլոր աղբիւրները, սակայն՝ նոցա շահագործութեան եղանակի մասին՝ առանց երկարաբանելու, քանի որ այն ծանօթ է Արգոյ Ծխական-Պատգամաւորներիդ նորա անցեալ տարուայ հաշուետուութիւնից։ Վանքի եկամտի գլխաւոր աղբիւրը կազմում է հողը, որ շահագործւում է. ա) *իբրեւ վարելահող* — Վ. Կ. 1910 թուին աճրդի էր դրել հետևեալ 29 վանդակները՝ (№№ 1—9, 16—17, 20—24, 28, 33,—39, 4[illegible]—46) ընդամենը 240 դ. 2271 ք. ս., որ՝ միջին հաշւով, դեսեատինը բռնեց մօտ 27 ռուբլի։ բ) *իբրեւ արօտատեղի* — Վանքի անվար մնացած 175 դ. 1998 ք. ս. հողից (բուռեանից՝) 150 դ. 798 ք. ս. Վ. Կ կապած եռամեայ պայմանի զօրութեամբ, առանց աճրդի, նոյն վարձագնով (7 ռուբլով) և այլ նախկին պայմաններով տրուած է պ. բժիշկ Բաղդ. Տրապիզոնցեանին. իսկ մնացեալը՝ նոյնպիսի պայմաններով Զալթրցի Մելքոն Խարախաշեանին։ գ) *Իբրեւ տնկարան* —Վանքի հողերից 22 դեսեատինը Վ. Կ. 1908 թուի պայմանի զօրութեամբ գտնւում է վաճառական Ռամի ձեռքին, որ դարձրել է տնկարան և վճարում է դեսեատինին 35 ռուբ։ դ) *Իբրեւ բանջարանոց*—Վանքը ունի յատուկ բանջարանոց, որ թէ և հաշւում է 10 դեսեատին,



բայց իրապէս 5 դեսեատին է, իսկ մնացեալ հինգը եղէգնուտ է, ուստի և անմշակելի. բանջարանոցը շահագործւում է նախկին տարիների եղանակով։

Բացի հողերից՝ վանքի եկամտի աղբիւր ներկայանում է նաև պարտէզը, որ՝ անցեալ տարուայ պայմանի զօրութեամբ, այս տարի ևս մնում է նախկին կապալառու պ. Մարգար Քայեալեանի ձեռին, քանի որ նա պայմանը անթերի կատարել է, այսինքն վարձը միանուագ կանխիկ վճարել է և՝ 'ի հաշիւ պարտքի, խոստացած գումարից աւելի գեղչել։

Վանական Կառավարութիւնը՝ ներկայ հանգամանքներում, պարտէզը այլ կերպ աւելի օգտաւէտ շահագործելու հնար չի գտնում, քանի դեռ ևս վանքի մէջ չեն ստեղծուած այնպիսի պայմանները, որոնք կարող են աւելի օգտաւէտ շահագործութեան ճանապարհ բանալ։ Վանական Կառավարութիւնը առանձին խնամք է տանում նաև պարտէզի բարգաւաճման վերայ, և այս նպատակով նա պահում է յատուկ պարտիզպան։

Հաշուետուութեանս տարեշրջանում Վ. Կառ. առանձին հոգսի առարկայ է եղել միշտ վանքի աղբիւրի ջրի առատացման և շահագործման խնդիրները, որպիսի նպատակի համար Արգոյ Պատգամաւորական Ժողովը անցեալ տարի նշանակեց 1500 ռուբ. միայն։ Վ. Կառ. աղբիւրի նախնական հետազօտութիւնները վստահելի անձանց ձեռքով կատարելու համար, որպիսիներ բացակայում են և՛ Նախիջևանում և՛ Ռոստովում, բանակցութիւն սկսեց Մոսկուայի և Պետերբուրգի ազգայիններից ոմանց հետ, որպէսզի հնար լինի գտնել այնպիսի մասնագէտ, որ նպատակայարմար հետազօտութիւններ կատարէ առանց աղբիւրին վնասելու։ Միաժամանակ՝ 'ի նկատի առնելով նշանակուած գումարի անբաւարարութիւնը և կամենալով նոյն իսկ նշանակուած գումարն ևս խնայել՝ Վ. Կառ. որոնում էր անձինք կամ հաստատութիւններ՝ որոնք իրենց հաշւով, բայց երկուստեք ևս ձեռնտու պայմաններով (հետազօտութիւններ կատարեն։ Եւ Վանական Կառավարութեան յոյսերը արդարացան. Նախիջևանի քաղաքագլուխ՝ պ. Մինաս Պալապանեանը լսելով Վ. Կ. ձեռնարկութեան մասին և կամենալով քաղաքին մաքուր և առողջարար ջուր մատակարարել՝ քաղաքային Դումայի համաձայնութեամբ՝ դիմում է Վ. Կառ. և՝ յայտնելով իւր մտադրութեան մասին՝ խնդրում է պայմաններ առաջարկել իրեն։ Վ. Կառ. և պ. քաղաքագլխի մէջ վերջնական համաձայնութիւն դեռ ևս կայացած չէ։ Քաղաքային Դուման Վ. Կառ. հետ որոշ համաձայնութեան գալու համար և իրեն պատրաստի ծրագիր ներկայացնելու նպատակով՝ գործը յանձնել է քաղաքի *շինարար յանձնաժողովին*. իսկ թէ Վ. Կառ. ինչ պայմաններ 'ի նկատի ունի առաջարկել՝ այդ մասին պատիւ կունենայ նա Ժողովին բերանացի զեկուցանելու։

Եթէ **1910** թուի նախահաշիւը համեմատելու լինենք նոյն թուի հաշուի հետ՝ կտեսնենք, որ մուտքի մէջ առանձին զանազանութիւն չկայ, այն ինչ ելքը մօտ 2500 ռուբլով պակաս է։ Այն զանազանութիւնը առաջ է եկել այն պատճառով, որ նախահաշուի՝ եկեղեցու պէտքերի և ներքին վերանորոգութեան համար նշանակուած 1000 ր. ծախսուած չէ. որովհետև գիտակ և վստահելի մասնագէտներից իւր ժամանակին նախահաշիւ և ծրագիր չստացուեցաւ, որ Վանական Կառ. տեսնէր թէ լինելիք վերանո-

բոգութիւնը շէնքի ներքին ոճին համապատասխան է՝ թէ ոչ։ Ուստի և յետաձգուեցաւ ապագայի։

Ծախսուած չէ նաև աղբիւրի համար նշանակուած 1000 ռուբլին, այն պարզ պատճառով, որ Վ. Կ. հաւատում է՝ թէ աւելի նպատակայարմար կլինի, կամ գուցէ ամենևին՝ կարիք անգամ չի լինի, վերոյիշեալ գումարը ծախսելու, երբ աղբիւրի ջուրը քաղաք բերելու հարցը լուծուի, և պայմանները վերջնականապէս մշակուեն։

**ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ԿԱԶՄԸ։** Վանական Կառավարութեան ներկայ անդրանիկ կազմը հաստատուած է իւր պաշտօնի մէջ Թեմիս Գերապատիւ Առաջնորդից 1907 թ. Դեկտեմբերի 12-ին եռամեայ ժամանակով և կազմուած է հետևեալ անձերից.

1. Տէր Վահան վարդ. Տէր-Գրիգորեանց, վանահայր և նախագահ Վանական Կառավարութեան.
2. Շապոշնիկեան Յովհաննէս, անդամ Վան. Կառ. և գանձապահ.
3. Դերիջանեան Աբգար, անդամ Վան. Կառավ.
4. Սագիրեան Յովակիմ, անդամ Վան. Կառավ.
5. Գէորգ սարկ. Չէօրէքչեան, անդամ Վան. Կառ. և գործավար
6. Խաչատրեան Յովհաննէս, անձնափոխանորդ (այժմ հանգուցեալ).
7. Տէր-Գրիգորեան Պօղոս, անձնափոխանորդ.
8. Ալլահվերդեան Մանուկ, հաշուատես.
9. Խամբուրեան Յովակիմ, հաշուատես.
10. Մալխասեան Յովհաննէս, հաշուատես (քաղաքից խոպառ բացակայ. լինելուն պատճառով՝ հաշուատեսութեան մասնակցած չէ)։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
Библ. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Նախագահ վանական կառավարութեան
Վանահայր Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանց.

Անդամներ Վ. Կ.
Յովհաննէս Շապոշնիկեան
Աբգար Դերիջանեան
Յովակիմ Սագիրեան

Գործավար անդամ Գէորգ սարկ. Չէօրէքչեանց.

тип. С. Я. Авакова, Нахичевань на Дону.

1002

0028024

1002

ՀՀ Ազգային գրադարան

NL0028024